Հաստատված է
մանկավարժական
խորհրդի նիստում
31. 08. 2023թ.

Դպրոցի տնօրեն՝

GRIGORYAN
GEVORG
1308620071

Подписано цифровой подписью:
GRIGORYAN GEVORG
1308620071
Дата: 2024.02.06
09:49:12 +04'00'

Գ. Գրիգորյան

2023 – 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀՐԱԶԴԱՆԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ № 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

2023 - 2024 ուստարվա հիմնական նպատակն է՝
•հանրակրթական ծրագրերի բովանդակության հիման վրա կրթության որակի շարունակական բարելավումն ու սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների զարգացումը.
•մտագործունեության տարբեր տեսակներին տիրապետող, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կատարելատիպին ձգտող շրջապատի ձևավորումը.
•մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների շարունակական կատարելագործումը.
• ներառական կրթության արդյունավետ իրագործումը.
• **ՆՁՓ-ի համապատասխան գործնեության ապահովումը**:

Դպրոցի՝ 2023-2024 ուստարվա մեթոդաբանությունն է՝ ՏՀՏ-ի միջոցների կիրառումը և վերջնարդյունքի ապահովումը որպես դասի արդյունավետության բարձրացման կարևոր և անհրաժեշտ պայման:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

2022-2023 ուստարվա սկզբին դպրոցի աշակերտների թիվը 976 էր: Ուստարվա ընթացքում դպրոցից հեռացել է 19 աշակերտ, դպրոց ընդունվել՝ 27-ը: Աշակերտների թիվը ուստարվա վերջին 984 է:984 աշակերտից գերազանցիկ են 210-ը: Իններորդ դասարանն ավարտած 102 աշակերտից 17-ը ստացել է հատուկ նմուշի վկայական:

Դպրոցի աշակերտների թվի աճը պայմանավորված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բարձր մակարդակով և արհեստավարժ, ճիշտ և նպատակային դպրոցավարությամբ:

Սեպտեմբերի 1-ից դպրոցում կոմպլեկտավորվել էր 32 դասարան. աշակերտների միջին խտությունը դասարանում 30 է:

2022-2023 ոստարում դպրոցի ուսուցիչների մի ստվար մասը մասնակցել է տարբեր ծրագրերի, դասընթացների, սեմինարների և ստացել վկայագրեր, հավաստագրեր, գովասանագրեր:

2022-2023 ոստարում դպրոցը իրականացրել է ներառական կրթության ապահովման ուղղված տարբեաշխատանքներ և միջոցառումներ:

Դպրոցի ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը ավելացել է մեկ աշակերտով (4 աշակերտ):

Ուստարում ուսումնական գործընթացը էլ ավելի զարգացնելու, դասաժամերն ավելի որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխանացնելու նպատակով դպրոցում խիստ ուշադրություն է դարձվել դասապրոցեսներին ՏՀՏ-ի միջոցների օգտագործմանը, համակարգչային կաբինետներում (դպրոցում գործում է երկու համակարգչային կաբինետ) բոլոր առարկաներից դասաժամերի

անցկացմանը, առցանց պարապմունքներին: 2022 թ. սեպտեմբերից մինչև 2023թ. մայիսի 26-ը ներառյալ համակարգչային կաբինետներում պարապվել է 480 դասաժամ: Ուսումնասիրվել է Մաթեմատիկա (I – VI դդ), Հայոց պատմություն (VI – IXդդ,) Քիմիա (VII – IX դդ), անգլերեն (VIII-IX դդ.),Երաժշտություն (I – V դդ), Գրականություն (VII – IX դդ),Շախմատ (II – IV դդ) առարկաների դասավանդման վիճակը: Տնօրենության կողմից մինչև մայիսի 26-ը տրվել են 93 գրավոր աշխատանքներ , որոնց միջոցով ստուգվել են ոչ միայն առարկայի դասավանդման վիճակը, այլ նաև աշակերտների գիտելիքներն ու կարողությունները, օրվա դասի պատրաստականությունը, ինչպես նաև տնօրենության կողմից իրականացվել է վերահսկողություն:

2022-2023 ուստարվա առարկայական օլիմպիադայի առաջին՝ դպրոցական փուլին մասնակցել են մոտ 405 աշակերտներ, տարածքային փուլին՝ 87 , մարզային՝ 45, հանրապետական փուլ են անցել 3 աշակերտներ(քիմիա, աշխարհագրություն, ռուսաց լեզու):

Դպրոցի աշակերտները, ինչպես միշտ, այս տարի ևս մասնակցել են ,Русский медвеженок, Կենգուրու միջազգային և «Մեղու» հայերենը բոլորի համար համահայկական մրցույթներին: Այս ուստարում ևս դպրոցի աշակերտները մասնակցել են ֆրանսերենի իմացության ,,Ոսկի աքաղաղ,, մրցույթին:

,Ռոբոտաշինությունը սկսվում է դպրոցից ծրագրի շրջանակներում գործել է նաև ռոբոտաշինության խմբակը, որում ընդգրկված են 25 աշակերտներ:

Ուստարվա ընթացքում դպրոցում տարբեր նպատակներով կատարվել են բազմաթիվ դասալսումներ:

Դպրոցում շարունակական է դարձել «Տաք սնունդ» ազգային ծրագիրը: 2022-2023 ուստարում այդ ծրագրից օգտվել են 440 աշակերտներ:

Այս ուստարում, բացի վերոնշյալից, դպրոցն ունեցել է նաև այլ ձեռքբերումներ, հաջողություններ, դպրոցում կազմակերպվել են տարբեր բնույթի նպատակային միջոցառումներ՝ առարկայական, արտադասարանական, արտադպրոցական, որոնք կներկայացվեն ստորև:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

1. <<Կրթությունն է երկրի կորիզը>> (լավագույն տասնյակ)
   1. Հարությունյան Էրիկ - VIգ
   2. Մինասյան Մերի - VII դ (II մրցանակ)

2. <<Մարզպետի գավաթ>>- խճուղավազք
   Արմինե Վարդանյան- IXա (վազք 2կմ, 2-րդ տեղ,25000 դրամ պարգևավճար)
3. Կոտայքի մարզի դպրոցականների մ-12տ. մրցաշար /ֆուտբոլ/, եզրափակիչ փուլ, 2-րդ տեղ, հանրապետական փուլի ուղեգիր
4. Շնորհակալագիր <<ԴԵՎԵԼՕՓ ԱՐՄԵՆԻԱ>> ՀԿ-ի կողմից
5. << Ֆրանսիական աքաղաղ>> II փուլ, 5 տեղ / VIIIա/
   Հարությունյան Արինա
   Յարոյան Անահիտ /պատվոգիր/
   Գրիգորյան Նարե
   Խաչատրյան Էլեն
   Ավետիսյան Արմինե
6. Առարկայական օլիմպիադա
   Մարզային փուլ - 13 աշակերտ
   Հանրապետական փուլ- 1. Այվազյան Գարիկ/քիմիա, ռուսաց լեզու/
   2.Ամյան Արթուր /աշխարհագրություն/
7. Հարությունյան Անի – IVդ <<Կենգուրու>> լավագույն մրցանակ
8. Հնգամարտ , հաջող հանդես եկան 2 աշակերտ՝ Վարդանյան Արմինե (IXբ),Գրիգորյան Նորայր (IXա), ընդգրկվել են մարզի հավաքական
9. Հեռացատկ տեղից – հանրապետությունում լավագույն արդյունք (Նորայր Գրիգորյան)
10. ՀՀ դպրոցականների շախմատի 17-րդ օլիմպիադա, տարածքային փուլ 1-ին տեղ
    1.Լիտվինով Ալեն- VIդ
    2. Թավաքալյան Խաչատուր – VIIIբ
    3. Թավաքալյան Անի- VIգ
    4. Մարգարյան Արգիշտի- VII գ

ԲԱՑ ԴԱՍԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. <<Թող հավերժ ողողանջեն զանգերը>>-միջոցառում նվիրված սեպտեմբերի 1-ին
2. <<Մենք հպարտ ենք մեր գիտելիքով>>- Գիտելիքի օր / 1.09.2022թ./

3. <<Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ>> - միջոցառումներ նվիրված ուսուցչի օրվան /5.10.2022թ./
4. <<Թող հայոց Այբ-ը համայն աշխարհին խաղաղություն պարգևի>> խորագրով Ա(ա)հնչյուն –տառի ուսուցման դասաժամեր I դասարաններում
5. << Գույների իմ աշխարհը>> անհատական ցուցահանդես (նկարչություն) /Միլենա Ավետիսյան-V ա Ա.Իսրայելյան /
6. <<Սպանված աղավնի>>- գրքի քննարկում դպրոցի գրադարանում /VIII բ դաս., 17.11.22թ./
7. <<Վերջին ուսուցիչը>> գրքի քննարկում / VIII- IX դաս. , 7.10.22թ./
8. <<Տեառընդառաջի խորհուրդը>>2 մասից բաղկացած միջոցառում (բակ, դասարան) /V գ դասարան, Հ.Զոհրաբյան/ 13.02.23թ./
9. <<Համբարձման տոն>>- միջոցառում / V դասարաններ/
10. Մայրենիի միջազգային օրվան նվիրված՝
   ա. <<Բառբառը մեր հարստությունն է>> (մրցույթային բեմականացում, Մ.Մկրտչյան)
   բ. <<Մայրենին ամենուր է>> շրջագայություն բոլոր դասարաններում: Եռատոն՝ Թումանյան, գրքի նվիրում, մայրենի...
   գ. Դաս-միջոցառում <<Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է>> խորագրով (V ա դասարան , Ա.Ղուկասյան)
   դ.<<Գրից մինչև ազգ և միասնություն>> բազմաբովանդակ միջոցառում (IV ա դասարան, Կ.Ահարոնյան)
11. <<Գիտելիքը ուժ է>> ինտելեկտուալ խաղ-վիկտորինա (Հ.Անանյան IX ա, բ, գ, մաթեմատիկա , բնագիտական առարկաներ)
12. <<Ֆրանսիական աքաղաղ>> ֆրանսերենի միջազգային մրցույթ /31 աշակերտ, 21.02.23թ./
13. <<Իմ հեռու, իմ մոտիկ, իմ սուրբ Հայաստան>> (հայրենասիրական միջոցառում, IV գ դասարան, Կ.Հովհաննիսյան)
14. Օդային տանգնապ - ԱԻՆ-ի աշխատակիցների մասնակցությամբ 13.04.23թ.
15. Քննչական կոմիտեի ներկայացուցիչների հետ դաս - հանդիպում(IX ա ,IX բ)
16. <<Մեր գրի ուժը պայմանավորված է նաև Մատենադարանով>>(I ա Հ.Խառատյան)
17. <<Խաղաղության թևով ճախրիր մեր ոսկեատառ Այբբենարան>> (Լ.Հարությունյան)

18. ՀՀ Կոտայի մարզի ոստիկանության անչափահասների տեսչության աշխատակիցների հանդիպումը տարբեր դասարանների աշակերտների հետ
19. <<Կռունկ, ուստի՞ կուգաս>>- Ի խորոց սրտի Կոմիտասի և Մեծ եղեռնի զոհերի հիշատակի: Դաս –միջոցառում , ցուցահանդես-միջոցառում (Հ.Զոհրաբյան, VIIդաս.<<Կոմիտաս>> թեմայի ամփոփիչ դաս)
20. <<Մենք գենն ենք հայի>> ավարտական համազարկ (Ա.Եղիազարյան IVդ դասարան)
21. <<Դասը վարում է ոստիկանը>>28.04.23թ.
22. <<Այբն է մայրն իմաստության>>28.04.23թ.(Թ.Վիրաբյան)
23. <<Հայրենասիրությունը ծնվում է մայրական կաթից>> ասմունքի մրցույթ(մարտ –ապրիլ, I-IVդդ, V-IXդդ.)
24. <<Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվելու>> թեմայով ասմունքի մրցույթ/ռուսերեն/
25. <<Գիքորը>>բեմադրություն-VIIբ դասարան (Ք.Ավետիսյան)
26. Տեխնոլոգիայի դասաժամ երկրագիտական թանգարանում (Iգ դասարան,Թ.Վիրաբյան,12.05.2023թ.):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ

1. <<Քո արվեստը դպրոցում>> ծրագիր 23.09.22թ. (Հ.Զոհրաբյան)
2. <<Տարվա լավագույնները>> մրցույթ՝ հայտարարված ԿԳՍՄ նախարարության կողմից (Էլ. Հարությունյան, Հ.Զոհրաբյան)
3. <<Կորիզ 2022 >> համադպրոցական մրցույթ
4. << Օրբելի եղբայրների կյանքն ու գործունեությունը>>միջհամայնքային օլիմպիադա(VII-IX դասարաններ, 11.10-18.10.22թ.)
5. ՀՀ ԿԳՍՄ նախարարության և ՀԱՊ-ի կողմից կազմակերպված <<ԴասԱրվեստ.բեմանկարչության արվեստը>> ուսուցողական և ճանաչողական միջոցառում 28.09.22թ./30-ից ավելի աշակերտ/
6. Կոնարդ Ադենաուեր հիմնադրամի և ՀՀ ԿԳՍՄ նախարարության համատեղ կազմակերպած<<Հասարակագիտություն>> առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթաց (26.09-28.09, Ա.Մարգարյան)

7. Կոտայքի մարզային գրադարան՝ հանդիպում Վահագ Ռաշի հետ(VII ա դաս., 07.10.22թ.)
8. <<Թանգարանը դպրոցում>> ծրագիր , դաս – միջոցառում 6-րդ դասարանցիների մասնակցությամբ: Դաս- միջոցառումը վարեցին Հայաստանի պատմության թանգարանի աշխատակիցները:
9. <<Ռուսաց լեզվի և գրականության դասվանդման ժամանակակց մոտեցումները>> դասընթաց (Լ.Մինասյան)
10. <<Փրկության կափարիչ>> դաս-միջոցառում,շարունակական ծրագիր
11. Կոտայքի մարզային գրադարան- Հանդիպում հեղինակի հետ,Կարեն Ադամյան <<Սեր և անմահություն>>(VII գ դասարան, Էլ. Հարությունյան)
12. <<Ինտերնետ հասարակության Հայաստան հատված,ՅՈՒՆԻՍԵՖ- մասնակցություն <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաները գործնականում>> ծրագրի շրջանակներում սարքավորումների կիրառման և նախագծման դասընթացին (հունվարի29-ից ապրիլի 29-ը)
13. Հանդիպում ԵՊՀ բանասիրական ամբիոնի դասախոս Նվարդ Վարդանյանի հետ.<<Սասնա ծռեր.խորհրդանիշներ>>
14. <<Հայրենասիրությունը սկսվում է մայրական կաթից>> ասմունքի մրցույթ. տարրական դպրոց -21.03.23թ., հիմնական դպրոց- 24.03.23թ.
15. Թումանյանական օլիմպիադա /25.03.23թ./
16. Մասնակցություն <<Լիվըր>>ընկերության հետ համատեղ հայտարարված գեղարվեստական թարգմանության մրցույթին՝ նվիրված Վ.Բրյուսովի 150-ամյակին
17. <<Ֆրանսիական աքաղաղ >> մրցույթ /մարտ/
18. <<Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն>> ՀԿ-ի կողմից անցկացվող <<Դիջիկոդ>> կիրառական ծրագրավորման 8-րդ պատանեկան մրցույթ /մարզային փուլ/ Վարդան Վարդանյան, հեռավար մասնակցություն/
19. <<Կորիզ 2023>>կրթական մարտահրավերին՝ պատրաստելով տեսահոլովակ /Գ.Հակոբյան, մարտ/
20. <<Երեխաների առցանց անվտանգության վերաբերյալ հարցում>>-ին <<Հայաստանի օպերատորների միություն>> ՀԿ-ի կողմից կազմակերպված (Գ.Հակոբյան,VII դասարան)

21. ԳԹԿ-ի կողմից Teams ծրագիր – IVա ,IVգ դասարաններ (2.05.2023թ.)
22. ՆԳ նախարարության ՓԾ Կոտայքի ՄՓՎ Հրաղդանի հրշեջ փրկարարական ջոկատի կողմից անցկացված վարժանքն դասխոսություն՝<<Երկրաշարժ>>թեմայով/3.05.2023թ./
23. <<Ոսկե սրինգ>> -Երևանի մանկական ֆիլհարմոնիկ դահլիճում կայացած մրցույթ փառատոնին մասնակցել են մի խումբ աշակերտներ, ցուցաբերել լավագույն արդյունք

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ

1.Բնագիտական մասնախումբ

- Հ. Անանյան -<<Մաթեմատիկան և ռուսաց լեզուն>>միջառարկայական կապը
- Ք.Ավետիսյան-<<50 հետաքրքիր փաստ Պյութագորասի կյանքից>> և <<Մաթեմատիկան և բնությունը>>
- Փ.Բաղալյան -<< Հետաքրքիր փաստեր երազների մասին>>
- Ս.Սարգսյան - << Համակարգիչ>>
- Գ.Հակոբյան - << Կյանքի յոթ շախմատային կանոնները>>

2.Օտար լեզվի մասնախումբ

- Ա.Գարեգինյան - << 20-րդ դարի ժամանակակից անգլերեն պոեզիա>>
- Լ.Ենոքյան - <<Աշակերտի անձնային որակների ձևավորումը և զարգացումը հեքիաթների միջոցով 5-րդ դասարանում>>
- Ն.Խաչատրյան- << Աութենիտիկ նյութերի կիրառումը հաղորդակցական նպատակներով>>
- Լ.Մինասյան- << <<Ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները որպես օտար լեզու>>
- Տ.Խաչատրյան- <<Շրջված դասարան>>
- Ն.Այվազյան- < Թարգմանության դերը ժամանակակից ռուսաց լեզվում>>

3.Գեղագիտական և ռազմահայրենասիրական մասնախումբ

- Ա.Իսրաելյան - <<Ի՞նչ է բուլինգը>>
- Հ.Զոհրաբյան-<<Ինչպե՞ս սովորողի մոտ ձևավորել ազգային արժեքները, ազգային երգ ու պար, երաժշտություն առարկաների դասավանդման ընթացքում>>:

4.Տարական մասնախումբ

- ,Բառապաշարի հարստացումը տարրական դասարաններումե / Մ.Սաֆարյան/
- ,Միջառարկայական կապերի հաստատումը մայրենիի դասավանդման գործընթացումե / Ն.Շաբոյան/
- ,Սովորողների մեջ ընթերցանության խթանումն ու զարգացումը տարրական դասարաններումե/Լ.Հարությունյան/
- ,Խաղը կրտսեր դպրոցումե /Դ.Մկրտչյան/
- ,Խաղային տեխնոլոգիաների դերը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ե /Ա.Նազարյան/

5.Հումանիտար մասնախումբ

- Հ.Սարտգսյան- <<Դաստիարակության տեսակները>> ըստ բովանդակության
- Ա.Մարգարյան-<<Նախագծային մեթոդի բովանդակությունը և տեսակները>>
- Ա.Ղուկասյան-<<Բուլլինգը դպրոցում>>
- Մ.Մկրտչյան-<<Պատիժը որպես հետևանքների արվեստ>>

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2023 - 2024 ուստարում էլ ավելի բարձրացնել ուսուցման մակարդակը՝ կրթության որակի հիմքը դարձնելով աշակերտների կարողունակության՝ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի, արժեքների համակարգի և ակնկալվող վերջնարդյունքի ապահովումը՝ ըստ կրթական աստիճանների:

Ճիշտ ընկալել հիմնական դպրոցի կարևորությունը և կատարել նրա առջև դրված պահանջները:

IX դասարանում կրթությունը նպատակաուղղել ավագ դպրոցում ուսումը ճիշտ հոսքում շարունակելու համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Դպրոցում մեծ ուշադրություն դարձնել աշակերտների նախասիրություններին, արտադասարանական խմբակների ձևավորմանը:

Կարևորել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքները և սույն գործընթացը կազմակերպել պահանջվող նորմերին համապատասխան:

Ստեղծել երկարօրյա խմբակներ, աշակերտներին տալ սնունդ:

Շարունակել մասնակցությունը <Տաք սնունդ> ազգային ծրագրին:

Բոլոր ուսուցիչների համար պարտադիր դարձնել համակարգչային գիտելիքների շարունակական կատարելագործումը և այդ գիտելիքների կիրառումը դասապրոցեսին և ընդհանրապես ամբողջ գործընթացում:

Անհրաժեստություն դարձնել դպրոցի բոլոր ուսուցիչների կողմից համակարգչի, ինչպես նաև այլ տեխմիջոցների, սոցհարթակների հնարավորություններից արդյունավետ և նպատակային օգտվելը, հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդներին և միջոցներին, նախագծային աշխատանքի ձևերին,կազմակերպման ընթացքին տիրապետելը:

Ապահովել դպրոցի փոխտնօրենների, ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման ու վերաորակավորման առկա և հեռավար դասընթացներին և սեմինարներին:

Նպաստել ուսուցիչների մասնակցությանը ատեստավորման գործընթացին:

Ընդլայնել առարկայական օլիմպիադաներում տարբեր առարկաներից ունեցած հաջողությունների ու ձեռքբերումների ծավալը:

Ունենալ ժամանակակից պահանջներին բավարարող դասասենյակներ, համալրել դպրոցի համակարգիչները, դիդակտիկ նյութերն ու լաբորատոր սարքավորումները, վերանորոգել դասասենյակներ:

Դասասենյակները կահավորել նոր գույքով:

Ուշադրության կենտրոնում պահել համադպրոցական, առարկայական և արտադասարանական գեղարվեստական բոլոր միջոցառումները, հետևել դրանց բովանդակությանն ու կազմակերպական հարցերին:

Ձևավորել առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Դպրոցի գործնեությունը կազմակերպել ՀՀ կառավարության,ԿԳՄՍ և առողջապահության նախարարությունների պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով հանրակրթությանը առնչվող օրենքները, նորմատիվ ակտերը, իրավական փաստաթղթերը, դպրոցի օրինակելի կանոնադրությունը, ՆՁՓ-ի պահանջները:

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Կատարել համայնքի կողմից հաստատված 5, 6 և 6.5 տարեկան երեխաների հաշվառում :	մարտ-մայիս	տնօրեն,ՄԿԱԳ տեղակալ, դասվարներ	
2	Ցուցակագրել 6 և 6.5 տարեկան երեխաներին:Մասնակցել շրջակա մանկապարտեզների ավարտական հանդեսներին, ներկայացնել դպրոցի ձեռքբերումները ու հաջողությունները:	հունիս-օգոստոս 2023թ.	տնօրեն, տեղակալներ, դասվարներ	
3	Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ	
4	Հնարավորության սահմաններում պայմաններ ստեղծել օգնելու սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով և գրենական այլ պիտույքներով:	սեպտեմբեր	տնօրենություն, ծնողական խորհուրդ, ԴԱԿ	
5	Խիստ վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ: Ժամանակին կանխել դրանք:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներԴԱԿ	
6	Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ	
7	Հետևել և վերահսկել ուսուցչի օգնականների ,սոցմանկավարժի, հատուկ մանկավարժի և հոգեբանի աշխատանքային գործընթացը	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
8	Աշխատանք տանել V- IX դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ	
9	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին,ծնողական խորհրդին	ուստարվա ընթացքում	տնօրեն տեղակալներ, ծնողական խորհուրդ, ԴԱԿ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
10	Հասնել նրան, որ դպրոց ընդունված աշակերտները ստանան հիմնական ընդհանուր կրթություն:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկ	
11	Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործնթացը բարեհաջող սկսելու համար:	օգոստոս	տնօրենություն, ԴԱԿ,տնտեսվար ,դասղեկներ	
12	Աշակերտներին ներգրավել կրթական բարենպաստ վիճակի ստեղծման, դպրոցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին:	օգոստոս, սեպտեմբեր, ապրիլ մայիս	տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ	
13	Դպրոցը մատչելի ու հասանելի դարձնել դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, կրթության համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմաններից:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն, տեղակալներ	
14	Դրսևորել ջանքեր՝ ուղղված համայնքում ապրող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների՝ կրթությունից դուրս չմնալուն:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ, ԴԱԿ	
15	Հետևել սովորողների կողմից օրինակելի վարքագծի դրսևորմանը, իրավախախտումներից զերծ մնալուն:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ, ԴԱԿ	
16	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ սիրով հաճախի դպրոց, և <Ես սիրում եմ իմ դպրոցը> նշանաբանը դառնա իրական:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ	
17	Թույլ առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել լրացուցիչ պարապմունքներում:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ ԴԱԿ	
18	Խրախուսել դպրոցի աշակերտների արտադպրոցական խմբակներում ներգրավվածությունը :	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ ԴԱԿ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
19	Բարձրացնել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակը:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
20	Կարևորել և ուշադրության կենտրոնում պահել դպրոցի անվտանգությանը և արտակարգ իրավիճակներին վերաբերող միջոցառումները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, գինղեկ	
21	Հետևողական լինել դպրոցի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարմանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ	
22	Կոմպլեկտավորել դպրոցի դասարանները:	օգոստոս	տնօրեն,ոս.աշխ. տեղակալ	
23	Աշակերտներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև նրանց իրավունքներին և պարտականություններին:	սեպտեմբեր	տնօրեն, տեղակալներ, դասղեկներ	

ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Նշանակել դասղեկներ և մեթոդմիավորման նախագահներ:	օգոստոսի 29-31	տնօրեն	
2	Անցկացնել մեթոդմիավորման նախագահների սեմինար խորհրդակցություն: Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:	օգոստոսի 28-31	տնօրեն, տեղակալ ուս. աշխ. գծով	
3	Պլանավորել մեթոդմիավորումների գործունեությունը:	օգոստոսի 28-31	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, մասնախմբի ղեկավարներ	
4	Դպրոցում կազմակերպել մանկավարժական և տարիքային հոգեբանությանը, աշակերտների սոցիալակացմանը առնչվող հարցերի պարզաբանման սեմինար-խորհրդակցություններ :	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալներ հոգեբան,սոց. մանկավարժ	
5	Դասղեկների աշխատանքը կատարելագործելու նպատակով դպրոցում կազմակերպել դասղեկների մեթոդմիավորում:	սեպտեմբերի 4-6	տնօրենի տեղակալներ	
6	Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ.ուս.գծով	
7	Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերարակավորման, ատեստավորման դասընթացներում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալ ուս. գծով	
8	Նպաստել ուսուցիչների ատեստավորման գործընթացին, ապահովել նրանց մասնակցությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն,տեղակալ ուս.գծով	
9	Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկավարժներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալ ուս. գծով	
10	Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ուսուցիչ-աշակերտ հարաբերությանը,	ուստարվա	տնօրենի տեղ.ուս.գծով	

	ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, ՏՀՏ օգտագործմանը,աշակերտակենտրոն դասապրոցեսներին:	ընթացքում		
11	Հետևողական լինել նոր և երիտասարդ ուսուցիչների գործեությանը: Պահանջել գրել օրվա դասի պլանը և ներկայացնել ամենօրյա ստուգման և հաստատման:	ուստարվա ընթացքում	տնօրեն,ուս.գծով տեղակալ, ուսուցիչներ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
12	Ուսուցիչների համար կազմակերպել մասնագիտական և մեթոդական դասախոսություններ, սեմինարներ, կոնսուլտացիաներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ նաև այլ հաստատություններից:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
13	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին և նոր չափորոշիչներին :	ուստարվա ընթացքում	տնօրեն,ուս. աշխ.գծով տեղակալ	
14	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության,ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումներին, նորմատիվ փաստաթղթերին:Նպաստել կրթության ոլորտում կատարվող փոփոխությունների իրագեկմանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ	
15	Կազմակերպել մանկավարժական խորհրդատվական աշխատանքներ:	յուրաքանչյուր ամիս	տնօրեն, տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
16	Ուսուցիչներին ընդգրկել մանկավարժական հետազոտական, նախագծային աշխատանքներում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ	
17	«Կրթություն» թերթի բաժանորդագրում:	դեկտեմբեր	տնօրեն	
18	Առարկայական մեթոդմիավորումներում քննարկել և ամբողջական տեքստի բերել ուստարվա առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	04.09.-08.09.2023թ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, առարկայական մասնախմբեր	
19	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի բաշխման վերաբերյալ քննարկումների կատարում և առաջարկությունների ներկայացնում:	մայիս-հունիս	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
20	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Հետևողական լինել թեմատիկ	սեպտեմբեր 11 - 15	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

	պլաններում առարկայի չափորոշչային պահանջների և ծրագրերի համապատասխանությանը:Էլեկտրոնային մատյաններում դրանց տեղադրմանը:			
21	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների խորհրդակցություն: Անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ:	ամիսը մեկ անգամ	տնօրեն, տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
22	Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել I – IX դասարանների դասղեկների միավորումներ (I–IV, V–VII, VIII–IX):	սեպտեմբեր	ՄԿԱԳ տեղակալ	
23	Կատարել դասալսումներ համապատասխան քանակով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալներ, մասնախմբի ղեկավարներ ուսուցիչներ	
24	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորանի սանդղակի մեթոդական ցուցումների,ինչպես նաև գնահատման տարբեր տեսակների կիրառումը:Ուշադրության կենտրոնում պահել բնութագրող գնահատման պահանջները:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	
25	Ուսուցչի անկյունը համալրել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, գրադարանի վարիչ, ԴԱԿ	
26	Կազմակերպել կոնսուլտացիոն (խորհրդատվական)պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար:	մայիս - հունիս	տնօրենի տեղ. ուս. գծով	
27	Ժամանակին կազմել և հաստատել քննական, ստուգող և առարկայական հանձնաժողովները, քննությունների անցկացման կազմակերպիչների և հերթապահների կազմը: Քննական կարգացուցակը և ժամանակացույցը	մայիս	տնօրեն, տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

	փակցնել պահանջվող ժամկետում:			
28	Ձևավորել դպրոցի ներքին գնահատումը իրականացնող հանձնաժողով:	հոկտեմբեր	տնօրեն	
29	Ընդլայնել ուսուցիչների մասնակցությունը համայնքային,մարզային, հանրապետական մրցույթներին, միջոցառումներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս.աշխ.գծով տեղակալ	
30	Մեթոդմիավորումների աշխատանքներին մասնակից դարձնել բոլորուսուցիչներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս.աշխ.գծով տեղակալ	
31	Մեթոդմիավորման ներսում ակտիվացնել նրանց գործունեությունը: Ավելացնել մեթոդա-կան զեկուցումների ծավալը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս.աշխ.գծով տեղակալ	
32	Կազմել դպրոցի՝ 2023-2024 ուստարվա կատարած աշխատանքների, ձեռքբերումների ու հաջողությունների ամբողջական հաշվետվությունը:	մայիս - հունիս	տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ, ուսուցիչներ	

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	օգոստոս, սեպտեմբեր	տնօրեն, տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
2	Կազմակերպել անսարք ապարատների և լաբորատոր սարքավորումների վերանորոգում, և դրանք դնել օգտագործման մեջ:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն,համ. կաբինետի վարիչ	
3	Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով (I-IX դաս.) և գրենական պիտույքներով (I դաս.) ապահովելու ուղղությամբ:	27.08-31.08	տնօրեն	
4	Սովորողների գիտելիքների որակը ստուգելու և բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի և մանկխորհրդի նիստերում:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
5	Մասնախմբերի նախագահների օգնությամբ ուսումնասիրել հետևյալ առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել. ա/ մայրենի I -VI դդ. բ/ հայոց լեզու VII- IX դդ. գ/ հանրահաշիվ VIII - IX դդ. դ/ ռուսաց լեզու IV-VII դդ. ե/ կենսաբանություն VI I-IX դդ. զ/ ինֆորմատիկա VII- IX դդ. է/ ֆիզկուլտուրա VII -IXդդ. II-VIդդ.աշակերտների՝ խնդիր լուծելու կարողությունների ստուգում: Ուղղագրական կարողությունների ստուգում տարրական դասարաններում:	02.10-17.11 13.11-15.12 21.11-20.12 15.01-29.02 19.02-22.03 03.03-30.04 03.04 – 17.05 ապրիլ-մայիս հոկտեմբեր-նոյեմբեր	տնօրենի տեղակալ ուս.աշխ.գծով մասնախմբերի ղեկավարներ	
6	Ուսումնասիրել ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների լաբորատոր գործնական աշխատանքների վիճակը:	դեկտեմբեր-ապրիլ	տնօրենի տեղ.ուս.գծով, մասնախմբերի ղեկավարներ	
7	Անցկացնել դպրոցական առարկայական օլիմպիադաներ:	նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար	տնօրինություն	
8	Ուսումնասիրել աշակերտների ընթերցանության տեխնիկայի վիճակը (II-VIդդ.)և արդյունքները քննարկել համապատասխան մասնախմբերում:	մարտ-ապրիլ	ուս.աշխ.գծով տեղակալ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
9	Հատուկ ուշադրություն դարձնել տարրական դասարանների ծրագրերի կատարմանը և դրանց յուրացման որակին:	Տարվա ընթացքում	տնօրենություն	
10	Օգնել դասղեկներին ժամանակին կազմելու կիսամյակային աշխատանքային պլանները և հետևել դրանց իրագործմանը:	սեպտեմբեր, հունվար	ՄԿԱԳ տեղ.	
11	I – IV դասարաններում կազմակերպել « Սիրում եմ քեզ իմ դպրոց » թեմայով միջոցառումներ:	12.10-18.11	դասվարներ	
12	Լուրջ ուշադրություն դարձնել մայրենիի ուսուցմանը. ա/ անցկացնել հայոց լեզվի և գրակ. առարկայական շաբաթներ, բ/ կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ և երեկոներ (VIII ,IXդդ.): գ/«Հավերժության ճամփորդ մեր մայրենին» թեմայով բաց դասեր բոլոր դասարաններում:	ուստարվա ընթացքում 22.02.2024թ.	տնօրենի ուս.աշխ.գծով տեղակալ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ	
13	Անցկացնել գրքերի քննարկումներ և ակտիվ ընթերցանության շաբաթներ:	նոյեմբեր, մարտ,ապրիլ	ուս.աշխ.գծով տեղ.,գրադ., հում.մասնախ.	
14	Պարբերաբար ստուգել թեմատիկ աշխատանքները, գրավորների քանակը և գնահատման նորմաների պահպանումը:	տարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուսումնական աշխ.գծով	
15	Անցկացնել ակտիվ դասալսումների շաբաթներ IX դասարանում:	հոկտեմբեր, դեկտեմբեր, ապրիլ	տնօրենություն	
16	Անցկացնել բանավեճեր տարբեր թեմաներով:	դեկտեմբեր, մարտ	դասղեկներ, ուսուցիչներ	
17	Ուսումնասիրել աշակերտների օրական ծանրաբեռնվածության հարցը:	սեպտեմբեր, հունվար	տնօրեն	
18	Ստեղծել ուսուցման համար նպաստավոր պայմաններ՝զարգացնելով դպրոցի նյութատեխնիկական և ուսմնամեթոդական բազան:	ուստարվա ընթացքում	տնօրեն,ուս. աշխ.գծով տեղակալ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
19	Կազմակերպել նպատակային և թեմատիկ էքսկուրսիաներ , հայրենագիտական ճամփորդություններ, այցելություններ մշակութային օջախներ:	սեպտեմբեր, հոկտեմբեր, մայիս, հունիս	տնօրենի ՄԿԱԳ տեղ., դասղեկներ	
20	Հաստատության շենքը, գույքն ու սարքավորումները խնամքով պահելու նպատակով աշակերտների հետ անցկացնել զրույցներ «Իմ լավագույն բարեկամը գիրքն է», «Դպրոցը իմ II տունն է» , «Դպրոցը իմ տունն է, նրա ունեցվածքը մեր սեփականությունն է» թեմաներով:	սեպտեմբեր, հունվար ապրիլ-մայիս	ՄԿԱԳ տեղ., դասղեկներ ԴԱԿ,գրադարանի վարիչ	
22	Սովորողների մոտ լավագույն գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով կազմակերպել ազգային ասեղնագործության,զարդանախշերի, կերպարվեստի,երգ- երաժշտության, ազգային երգ ու պարի արտադասարանական խմբակներ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ.գծով, ՄԿԱԳ տեղ.	
23	Սովորողների օգնությամբ ա/ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, վերանորոգել և պատրաստել նոր ստենդներ, բ/կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ: գ/կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները դ/ստեղծել վահանակներ	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ տեղ. և տնտեսվար, մ/մ նախագահներ	
24	Դպրոցում ունենալ սպորտային, ասմունքի, ստեղծագործական և առարկայական կարողությունների զարգացման ,վայելչագրության խմբակներ: Հսկողություն սահմանել պարապմունքների նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	
25	Տարբեր մարզաձևերից կազմակերպել միջդասարանական միջոցառումներ, անցկացնել սպորտլանդիա:	սեպտեմբեր, ապրիլ-մայիս	դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
26	Հետևել ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցման ապահովմանը՝ուսուցման ավանդական և արդիական մեթոդների համադրմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն,ուս. աշխ.գծով տեղ.	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
27	Հետևել համակարգչային կաբինետում պարապվող բոլոր դասաժամերին: Հետևողական լինել այդ դասաժամերի արդյունավետությանն ու նպատակաուղղվածությանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս. աշխ. գծով տեղակալ	
28	Համակարգիչը դարձնել դպրոցական աշխատանքների կոորդինատոր:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
29	Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ՝ նվիրված տոնական և հիշատակի օրերին:	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ,ուսուցիչներ, տեղակալ, դասղեկներ	
30	Իրավաբանական դաստիարակության նպատակով աշակերտներին ծանոթացնել միջազգային կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքներին:Մասնակցել վերոնշյալ նպատակին վերաբերող ծրագրերին:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ԴԱԿ,հասարակագիտության ուսուցիչ	
31	Կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ՝ ինքնասպասարկում, դասարանի կահավորում, վերանորոգում և այլն:	ուստարվա ընթացքում	տնտեսվար դասղեկներ	
32	Անցկացնել առարկայական շաբաթներ, միջոցառումներ նվիրված նշանավոր գրողների, արվեստագետների, գիտնականների, քաղաքական գործիչների հոբելյանական տարելիցներին:	ուստարվա ընթացքում	մասնախմբեր, ուսուցիչներ	
33	Անցկացնել զրույց I - IX դասարաններ-. ի սովորողների հետ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին:	ուստարվա ընթացքում	տնօրենություն բուժքույր, դասղեկներ	
34	Ուսումնասիրել սանիտարահիգիենիկ նորմաների պահպանման վիճակը ինքնասպասարկման պայմաններում:	ամիսը մեկ անգամ	բուժքույր, դասղեկներ	
35	Սովորողների ֆիզդաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հարստացնել մարզական գույքով:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրեն, տնտեսվար	
36	Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզային նորմատիվների հանձնում:	սեպտեմբեր, մայիս	տնօրեն, ֆիզկ.ուսուցիչ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
37	Օգնել սովորողին ճանաչելու ինքն իրեն, իր հայրենիքը, իր ժողովրդին, նրա ստեղծած հոգևոր և նյութական արժեքները:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, ուսուցիչներ	
38	Աջակցել, որ սովորողները ճիշտ կողմնորոշվեն հասարակական բազմաբնույթ հարաբերություններում, ամբողջական պատկերացում ունենան Հայաստանի զարգացման հեռանկարների մասին:	ուստարվա ընթացքում	տնօրեն,տնօրենի տեղակալներ, ուսուցիչներ, ԴԱԿ	
39	Գեղարվեստական կրթության և գեղարվեստական դաստիարակության միջոցով ապահովել աշակերտի մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ, ուսուցիչներ	
40	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ,մղել նրանց ստեղծագործական,որոնողական, հետազոտական աշխատանքների:	ուստարվա ընթացքում	տնօրեն,տեղակալներ, դասղեկներ, ուսուցիչներ	
41	Դասղեկներից պահանջել շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ՝ ըստ նախապես կազմված դասացուցակի, և լրացնել դասամատյանում:	ուստարվա ընթացքում	դասղեկներ	
42	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային,պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	ուս.աշխ. գծով տեղակալ	
43	Ուստարվա ընթացքում կազմակերպել «Առողջության օրը դպրոցում» միջոցառում: Դպրոց հրավիրել բժիշկներ՝տարբեր մասնագիտությունների գծով:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՄԿԱԳ տեղ., բուժքույր	
44	Անհրաժեշտության դեպքում կատարել ամենօրյա ջերմաչափում: Կազմակերպել սովորողների և ուսուցիչների առողջության պահպանմանը ուղղված միջոցառումներ:	ուստարվա ընթացքում	տնօրենություն	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
45	VI դասարաններում անցկացնել ընթերցանության օլիմպիադա:	ըստ սահմանված ժամկետի	ուս.աշխ. գծով տեղակալ, հում.մասն. ղեկավար	
46	Հետևողական լինել դասացուցակում աշակերտների ճիշտ ծանրաբեռնվածության պահպանմանը:	սեպտեմբեր , հունվար	ուս.աշխ. գծով տեղակալ	
47	Աջակցել < Ռոբոտաշինություն> խմբակի աշխատանքների կազմա-կերպմանն ու կայացմանը:	սեպտեմբեր	տնօրենություն	
48	Ուշադրության կենտրոնում պահել ֆիզկուլտուրայի պարապմունքների ժամանակ պահանջվող նորմաների կատարումը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ուս.աշխ. գծով տեղակալ	

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Հասնել նրան, որ դպրոցի յուրաքանչյուր աշակերտ ունենա ընդհանուր պատկերացում հայրենիքի պաշտպանության հիմնահարցերի և զինվորական պատրաստության պահանջների մասին:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, զինղեկ	
2	Ծանոթացնել աշակերտներին հայոց բանակի կազմավորման և կայացման պատմական ժամանակաշրջաններին, բացահայտել նրա դերն ու նշանակությունը, կազմակերպել այցելություններ զինվորական զորամասեր:	հոկտեմբեր, ապրիլ	պատմության ուսուցիչ, զինղեկ	
3	Ապահովել IX դասարանի աշակերտների՝ ՀՀ «Զինապարտության մասին» օրենքի հիմնական դրույթների և զինվորի երդման պարտադիր իմացությունը:Նպաստել,որ դպրոցի յուրաքանչյուր աշակերտ իմանա պետական օրհներգը, ճանաչի հայոց դրոշը, զինանշանը:	ուստարվա ընթացքում	զինղեկ, ուսուցիչներ, ՄԿԱԳ	
4	Ամեն երկուշաբթի դասաժամերը սկսել ՀՀ օրհներգի կատարումով:		տնօրենություն, դասղեկներ	
5	Կազմակերպել դասընթացներ և միջոցառումներ աշակերտներին արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին և առաջին օգնության հիմունքներին ծանոթացնելու նպատակով:	հոկտեմբեր, փետրվար, մարտ	քաղպաշտ. շտաբի պետ	
6	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ զգա, որ ինքը ոչ միայն հայրենիքի, այլ նաև հայոց բանակի մի մասնիկն է, մի կաթիլը:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, զինղեկ	
7	Կազմակերպել այցելություններ Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններ	մայիս	ՄԿԱԳ տեղ., զինղեկ, դասղեկներ. ԴԱԿ	
8	Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» խորագրով միջոցառում:	մարտ	տնօրեն, զինղեկ	
9	Պատմական հուշարձանների խնամքն ու բարեկարգումը դարձնել արտադաս. աշխատանքների մաս:	ապրիլ-մայիս	ՄԿԱԳ,ԴԱԿ ուսուցիչներ, աշակերտներ	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
10	Կազմակերպել աշակերտների այցելություններ զինվորական զորամասեր:	հոկտեմբեր, ապրիլ	տնօրենություն, զինղեկ	
11	Աջակցել << Փառք քեզ, հայո՛ց բանակ>> համադպրոցական միջոցառման կազմակերպմանն ու աջակցմանը:	28-30 հունվարի	տնօրենություն, զինղեկ, ազգ. երգ ու պարի ուսուցիչ	

ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի ղեկավարների միջև:	22.08 - 24.08	տնօրեն	
2	Կոմպլեկտավորել դասարանները:	28.08 - 31.08	տնօրենություն	
3	Սահմանել աշխատանքային ռեժիմ:	31.08.2023թ.	տնօրենություն	
4	Նշանակել և հրամանագրել դասղեկներ և արտադաս. խմբակների ղեկավարներ առկայության դեպքում:	31.08.2023թ.	տնօրեն	
5	Նշանակել մասնախմբերի ղեկավարներ և ներկայացնել մանկավ. խորհրդին	31.08.2023թ.	տնօրեն	
6	Ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել ուստարվա սկիզբը պատրաստ դիմավորելու համար:	20.08 - 28.08	տնտեսվար, կաբ. վարիչներ լաբորանտներ	
7	Աշակերտներին նախապատրաստել ուսումնական տարվա սկզբին (նախնական հավաքներ, դասագրքերի բաժանում և այլն):	27.08-31.08	դասղեկներ	
8	Կարգավորել աշակերտական գործերը:	20.06 - 05.07	դասղեկներ	
9	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
10	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները:	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ տեղ. ԴԱԿ	
11	Անցկացնել մրցույթներ, առարկայական օլիմպիադաներ, բացել ցուցահանդեսներ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով ՄԿԱԳ,ԴԱԿ	
13	Ընդլայնել դպրոցական երգչախմբի գործունեությունը:	սեպտեմբեր, հոկտեմբեր	երգչախմբի ղեկավար	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
14	Կազմակերպել և վերահսկել աշակերտական խորհուրդների աշխատանքները:	սեպտեմբեր, հոկտեմբեր	ՄԿԱԳ տեղ. ԴԱԿ	
15	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում և սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	մշտապես	տնօրեն, ՄԿԱԳ տեղ., ԴԱԿ	
16	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	հունիս-օգոստոս	դասղեկներ, գրադ. վարիչ	
17	Ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները,վերաքննություն-ները:	03.07.2023թ.-28.08.2023թ.	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
18	Դպրոցական գույքը և շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	15.08.2023թ.-31.08.2023թ.	տնօրեն, տնտեսվար	
19	Ընդլայնել արտադասարանական խմբակներում ընդգրկված աշակերտնե-րի թիվը և տոկոսը:	սեպտեմբեր	տնօրենություն, արտ.խմբակնե-րի ղեկավարներ	
20	Բարձրացնել արտադասարանական խմբակների աշխատանքների արդյունավետությունը:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, արտադաս.խմբ-ակների ղեկավարներ	

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները:	11.09.2023թ.-15.09.2023թ.	տնօրեն, տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
2	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	մշտապես	տնօրենի տեղ. ուս.աշխ.գծով և ՄԿԱԳ տեղ.	
3	Ստուգել գործնական աշխատանքների կատարման վիճակը տարբեր առարկաներից:	նոյեմբեր, ապրիլ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
4	Կազմակերպել գիտելիքների ստուգում IV դասարաններում	դեկտեմբեր, ապրիլ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
5	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքները:	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ տեղ.	
6	Բոլոր ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկել առարկայական, դասղեկական մասնախմբերում, մանկխորհրդում կամ տնօրինության ընդլայնված նիստում:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
7	V դասարաններում աշակերտների հարմարվածությունը ստուգելու նպատակով կատարել դասալսումներ և անցկացնել գրավոր աշխատանքներ:	հոկտեմբեր	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
8	Ստուգել ծրագրային նյութերի և թեմատիկ պլանավորման վիճակը ուսումնական առարկաներից:	11.09 - 15.09 11.12-15.12 10.01 – 17.01 13.05-17.05	տնօրենի տեղ. ուս. գծով	
9	Տարեկան 2 անգամ ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին ու նորմաներին:	դեկտեմբեր-ապրիլ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով մասնախմբերի ղեկավարներ	
10	Ստուգել էլմատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:	պարբերաբար	տնօրենի տեղ. ուս.աշխ գծով	
11	Ստուգել դժվարությամբ առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները: Արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում:	հոկտեմբեր, մարտ	տնօրենի տեղ. ուս.աշխ գծով	
12	Անցկացնել գիտելիքների գնահատման, ակտիվ հաշվառման օրեր և շաբաթներ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
13	Պարբերաբար ստուգել ուսուցիչների պատրաստությունը դասերին, օրվա դասերի պլանների առկայությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
14	Անցկացնել դասալսումներ ցածր առաջադիմություն ունեցող դասարաններում:	ուստարվա ընթացքում	տնօրեն,ուս.աշխ. գծով տեղ., դասղեկ	
15	Հետևել դպրոցի սանիտարական վիճակին և աշակերտների անձնական հիգիենայի հարցերին:	մշտապես	տնօրենություն տնտեսվար, բուժքույր, դասղեկ	
16	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրենության նիստ, վերլուծել շաբաթական պլանները:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
17	Ուստարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
18	Հետևել , որ դասաժամերի բացթողումները,բացի տոնական և հիշատակի ոչ աշխատանքային օրերից, լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:	մշտապես	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: Ընտրել ծնողական խորհրդի անդամներ և նախագահներ:	04.09.2023թ.-15.09.2023թ.	ՄԿԱԳ տեղ. դասղեկներ, դասվարներ	
2	Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	սեպտեմբեր, դեկտեմբեր, մայիս	տնօրենություն, դասղեկներ	
3	Ձևավորել հաստատության ծնողական խորհուրդ , նրա անդամներին ծանոթացնել խորհրդի կանոնադրության հետ:	սեպտեմբեր	ՄԿԱԳ տեղակալ	
4	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների ու զեկուցումների թեմատիկ պլան:	սեպտեմբեր	ՄԿԱԳ տեղ.	
5	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ծնող. խորհրդի նախ.	
6	Հաստատության գործունեությամբ շահագրգռված անձանցից կազմել հոգաբարձուների խորհուրդ, ընտրել նախագահ:	04.09.2023թ.-06.09.2023թ.	տնօրեն	
7	Հոգաբարձուների խորհրդի ձևավորման դեպքում վերջինիս կանոնադրությունը ծանոթացնել խորհրդի անդամներին:	սեպտեմբեր	տնօրեն	
8	Կոորդինացնել ծնողական և կառավարման խորհուրդների գործունեությունը:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
9	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական դաստիարակության բարելավմանը նպաստող միջոցառումներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
10	Անցկացնել ծնողական ընդհանուր ժողովներ I -IX դաս. :	սեպտեմբեր, դեկտեմբեր, մայիս	տնօրեն	
11	Ծնողների համար կազմակերպել հաճելի ժամանց՝ներառելով դպրոցի «ազգային երգ ու պար» առարկայից բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտներին:	ուստարվա ընթացքում	ՄԿԱԳ տեղ.	
12	Իրականացնել մանկավարժական պրոպոգանդում ծնողների շրջանում հետևյալ թեմաներով. ա. Ծնող - երեխա հարաբերությունը, բ. Անչափահասների սեռական դաստիարակության առանձնահատ. գ. Ծնող – ուսուցիչ - աշակերտ կապը: դ.Ծնողի իրավունքներն ու պարտական.	հոկտեմբեր, մարտ	տնօրինություն, բուժքույր, դասղեկ	
13	Հնարավորության սահմաններում ծնողական համայնքի և դպրոցի նախկին շրջանավարտների ֆինանսական աջակցությամբ հարստացնել դպրոցի արտաբյուջետային միջոցները:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
14	Ծնողներին ծանոթացնել դպրոցական ռեժիմին, <Ուսումնական հաստատության սովորողների կրթական ծրագրերի յուրացման, փոխադրման, ավարտման> կարգին:	սեպտեմբեր-մայիս	տնօրենություն	